ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆ

ք.Երևան «18» ապրիլի 2025թ.

ՀՐԱՄԱՆ N 57-Լ

ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 29.04.2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաստատել՝

1) ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:

2) ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթներին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ համաձայն Հավելված 2-ի:

3) ազգային ֆիլմերի նախագծերի պետական ֆինանսավորման տրամադրման մրցույթների շրջանակում յուրաքանչյուր ֆիլմի նախագծին հատկացվող պետական ֆինանսավորման առավելագույն չափերը՝ համաձայն Հավելված 3-ի:

2. Սույն հրամանի ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն հրապարակել ազգային մարմնի պաշտոնական կայքում:

3. Ուժը կորցրած ճանաչել 29.04.2024 թվականին հաստատված «Կինոնկարների նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման» կանոնակարգը:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ԲԱՆՈՒՉՅԱՆ